

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կէկէլ, Նատալիա և Արշակ Բաղդասարեանները, Նուէն Յարու-
թիւնեան Յիւրիկեան և Նիքիթի Աւետիքեան Տէր-Աբրահամեան, խորհրդի
ցաւով յայտնելով առաջին երեքը իրանց անստանալի մօր, չորրորդը իր
հինգերորդը իր զորանչի.

ԱՆՆԱՅԱԿՈՐԵԱՆ ՅԻՅԻԿԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 11-ին, խորհրդում են աղղականքներ և ծանօթներին
հորէ բերել յուղարկութեան կիրակի օր, մայիսի 16-ին, առաւօտեան 10 ժամին,
Խիշնայա պողոտայ, տուն Սողոմոնեանցի, դէպի Նորաշէնի Ս. Աստուածածնի եկեղեցին և
այնտեղից Խիշնայի գերեզմանատունը:

Ամբիժը չաբաթ օր, մայիսի 15-ին, երեկոյեան 7 ժամին: (ս. չ.) 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ են սպասում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Նամակ Օղնայից. Նամակ Ներսիսից.
Նամակ Սոփիայից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լու-
րեր Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Արտա-
քին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—
Հին ուրուականը:

ԻՆՉ ԵՆ ՍՊԱՍՈՒՄ

Խաղաղութեան կոնֆերանսի պա-
րագմունքները սկսվեցին: Մեր ստացած
հեռագրերը և լրագրական տեղեկու-
թիւնները ցոյց են տալիս, որ համաշ-
խարհային այդ մեծ ժողովին մասնակցող
պետական ներկայացուցիչները և գիտնա-
կան գործողները զգում են, որ նրանց
քննութեան առաջարկված խնդիրները
շատ լուրջ և դժուար լուծելի են, որ
տեսական ցանկութիւնները և իրէական
տեսչանքները դժուարութեամբ են վերաճ-
վում գործնական ձևակերպութեան: Սա-
կայն նրանք հաստատ յոյս ունեն, որ
կոնֆերանսի կը հասնի մի քանի էական
և միմյանի հետեւանքների, որոնք
ազդեցութիւն կունենան ապագայ միջազ-
գային յարաբերութիւնների վրա: Այդ
հետեւանքները սպասվում են մի կողմից
միջնորդ դատարանի կազմակերպու-
թեան, միւս կողմից պատերազմի միջին
ժամանակ գործադրվող էտիկայի վերա-
բերութեամբ: Ուրիշ խօսքով, կոնֆերան-
սիայի անդամները յոյս ունեն, որ կարելի

է շատ ընդհարումների և պատերազմների
առաջն առնել միջնորդ դատարանի միջո-
ցով, զիմով չէզոք պետութեան, որ
քննի վիճող պետութիւնների մէջ ծագած
թիւրամացութիւնները և յայտնէ իր որո-
շումները: Միւս կողմից պատերազմների ժա-
մանակ տեղի ունեցող շատ զրկանքներ ու
զոհեր կարելի է հետաքննել և տանջանք-
ները մեղմանել միջազգային պայմանա-
խօսութեամբ, օրինակ պաշտպանութիւն
սահմանելով հիւանդների և վիրաւորների
համար, ապահովելով դերեւանքների վիճա-
կը, վերադարձնելով նրանց որքան կարելի
է շուտով իրանց հայրենիքը, վերջապէս
ծրագրելով աւերումների և ուրախութեան
թիւնների համար որոշ սահմանափակող
մի կանոն:

Եթէ միջնորդ դատարաններ սահմանելը
կարողանայ աջող լուծում ստանալ—դա
կը լինի էական մի գործ, որ առիթ կը
տայ արդիւնաւետ ձեռնարկութիւնների
ապագայում: Արդարեւ, միջնորդ դատա-
րան սահմանելու համար անհրաժեշտ է, որ
մշակվեն այնպիսի որոշ սկզբունքներ, որ
հաստատ հիմնաքարեր, որոնցով դեկա-
վարվեն միջնորդ դատարանի դեր կատա-
րողները: Իսկ միջազգային գործերի վե-
րաբերութեամբ սկզբունքներ որոշելը կը
զրդի համամարդկային հիմնական իրա-
ւունքների և համբարշտութեան պահանջ-
ների խնդիրները քննութեան լուրջ հողի
վրա դնել: Եւ անկասկած՝ այստեղ միայն
արդարութեան պահանջները կարող են վե-
կավար դեր կատարել և ուղեցոյց դառնալ
վիճիւններ կայացնելու համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ՌԻՐՈՒԱԿԱՆԸ

VIII

Այս հանգամանքի մէջ դարմանալու բան չը
կայ: Պապականութիւնը, որ Արևմտեան Նիքո-
պոլի կրթութեան տէրն էր, այդ ժամանակ
թաղված էր առիթաւանութեան և վանական
խաւարմանութեան մէջ: Կաթոլիկ եկեղեցու
հայրերը առեւելքում էին գիտութիւնը Բաղ-
դաթիւ. *) օրինակները բերենք մէկը: Ս.
Ֆրանցիսկոսը, որի հիմնած կրօնաւարական կար-
գին էին հետևում հայ ունիթիոնները, ասում է.
«Կան շատ եղբայրներ, որոնք գիտութեան ձեռք
բերելու ջանքեր են անում. մոռանալով իրանց
կոչումը, նրանք հետևում են հեղութեան սուրբ
հանապարհից: Այն եղբայրները, որոնք հետա-
քրքրութիւնից մղվում են դէպի գիտութիւն,
անել դատարանի օրը կը տեսնեն, որ իրանց
ձեռքերը դատարանի են... Կը գայ այդ օրը և այն
ժամանակ անօգուտ դրբերը պիտանի կը լինեն
միայն կրակի մէջ գցելու համար... Ուրեմն անձ-
նատուր մի լինէ՛ք աշխարհի ունայն գիտու-
թեան: Այնին ինչ ճշմարտութեան, աշխարհից
հեռանալու մասին էր քարոզում: Եկեղեցին

ճանաչում էր միայն հողիները, իսկ նրանց ա-
ղաւթութիւնը միմյան պապական բացարձակ,
անսահման միապետութեան մէջ էր տեսնում:
Պապը պաշտովում էր իբրև մի գերագոյն էակ:
Այսպէս, Օգոստինոս Տրիդենթ վարդապետը աս-
տում է թէ պապի վիճիւր Աստուծու վիճին հա-
ւասար է և պիտու է թէ պապին պէտք է եր-
կրպագել, իբրև Աստուծու: Իսկ մի ուրիշ կրօ-
նաւոր, ֆրանցիսկան Պելագոս, ասում է թէ
պապը հասարակ մարդ չէ՝ այլ Աստուած (papa
non est homo simpliciter, sed Deus), թէ պա-
պը կայսրի Աստուծուն է (papa est Deus im-
peratoris): *) Արեւելեան քրիստոնեաները, որ-
քան էլ խնդր ու տղէտ, երբէք չեն հասել այս
աստիճան վրդովեցուցիչ ֆանատիկոսութեան:
Եւ աշխարհին այդ մտքերը ընդունել տալու հա-
մար էր, որ հիմնվեցան ֆրանցիսկան և դոմինի-
կան կրօնաւորների կարգերը. մասնաւոր դո-
մինիկեանները նշանաւոր հանդիսացան իբրև
պապականութեան քարոզիչներ աշխարհի բոլոր
կողմերում: Իրանք էին, որ հայ ունիթիոնների
ուսուցիչ ու ղեկավար եղան:

Բայց ինչ կարող էին տալ պատերազմող պա-
պականութեան այդ զինուորները, որոնց նպա-
տակն էր պաշտպանել միանշանակ ընդունված
վարդապետութիւնը և կրօնական ձևերը: Ան-
հայտ թշնամի ամեն մի նոր մտքի դոմինիկեան-
ները հնարեցին ինկվիզիցիան և դարձան այդ
սարսափելի գործի պաշտօնականներ: Դոմինիկեան
հռչակված գործիչներից մէկը, Թովմա Ավիլանա-
ցի (որին անուանում են «եկեղեցու մեծ արե-
ն») Ibid., եր. 337.

Թող որոշվեն այդ պարտաւորեցուցիչ
սկզբունքները և ճանաչվեն հեղինակաւոր
ժողովը կողմից: Եթէ գերեզմանութիւնը
այժմ այլ ևս կասկածի առիթներ չէ ներ-
կայացնում և ամենքը պարտաւորվել են
գերեզմանութեան դէմ կուել ամեն
կերպով, անշուշտ դա զբաւակն է դերի-
ներին և ստրուկների համար և նրանք այլ
ևս առիթ չունեն մտածելու իրանց ա-
ղաւթութեան մասին և զիմելու բացառիկ
միջոցների, որոնք վտանգի ենթարկէին
այս կամ այն պետութեան կազմը: Մի-
ջազգային շատ ուրիշ խնդիրներ ևս կա-
րող էին հեշտութեամբ լուծվել, երբ
ընդհանուր պարտաւորութիւնների թիւը
կաւարանար: Այն ժամանակ միջնորդ դա-
տարանի կազմվելը կը դառնար մեծ սանձ
պետութիւնների համար և էին կրկնվի
այն դէպքերը, որոնք անցեալում միջազ-
գային սարսափելի ընդհարումների առիթ
են դարձել և կը ստիպէին բոլորին ան-
շուշտ կերպով իրադրութեան միջազգային
արդարադատութեան պահանջները: Այն
ժամանակ կարող է կամաց-կամաց հող
պարտաւորել զինադադարի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼ

Իէկլամը մեր մէջ էլ սկսեց անբարոյակա-
նացնող գործեր կատարել: Յայտնի է թէ մե-
ղմում որքան քիչ է համեստութիւն ասած
բանը և դրա փոխարէն որքան անշուշտ է մե-
ծամտութիւնը: Եւ առաջինս առաջին, որ փոքու-
ր շատ ընդունակութիւն է ցոյց տուել որ և է
ճիշդի մէջ, սաստիկ ատում է այդ «համեստու-
թիւն» բառը և արդէն դափնիներ, արձաններ է
պահանջում իր համար: Այսպէս մենք շատ չենք
առաջ դնայ, մինչև որ չը հասկանանք թէ աղ-
նիւ, անհագործ մշակի աւարտը փառքը նրա
համեստութիւնն է, մենք երբէք չենք ունենայ
լու գործեր: Շատ անգամ է պատահել, որ
«Մշակ» համեստութեան դասեր է տուել այս
կամ այն անձին կամ հիմնարկութեան. բայց ինչ-
Փորքի, միկրոսոփայական ընդունակութիւննե-
րի տէր մարդիկ միշտ կատարել են մեր դէմ,
ասելով թէ մենք այսպէս խօսում ենք չկամու-
թիւնից, թէ մենք պիտի իրախոսենք, բարձ-

գալ») այսպիսի վճիռ է տուել ինկվիզիցիայի
մասին. «Հերձուածը մեղք է. նրանք, որ գոր-
ծում են այդ մեղքը, պիտի արտաքսվեն ոչ
միայն եկեղեցուց, այլ և այս աշխարհից՝ մահ-
վան միջոցով: Աղձատել կրօնը, որից կախված
է յաւիտեանական կենքը, աւելի ծանր յանցանք
է, քան կեղծ դրամ կարելը, որ ժամանա-
կաւոր կենքի կարիքներին է ծառայում: Հե-
տեւաբար, եթէ դրամանիւնքներն, ինչպէս և
միւս ռեպրոդուկտիւններն աշխարհական թաղաւոր-
ները արդարացի կերպով մահվան պատի են
ենթարկում, աւելի արդարացի է մահվան են-
թարկել հերետիկոսներին, երբ նրանք բռնված
են հերետիկոսութեան մէջ:»

Ահա թէ ուրեք էին հայ ունիթիոնների և ըն-
դունող պրօպագանդայի ղեկավարները: Զարմա-
նալ այդ միաբանողների տղիտութեան, ֆանա-
տիկոսութեան վրա: Ոչ, պէտք է զարմանալ որ
Հայաստանում էլ չը վառվեցին ինկվիզիցիայի
խարոյկները՝ հերետիկոսներին առանց արևն
թափելու: Երբեք չենք տեսնում, այսինքն այրելու հա-
մար: Եթէ չէ եղել այդ, պատահու, երևի, այն
էր միայն, որ Արեւելքը Նիքոպոլի օրը, ուր աշ-
խարհական իշխանութիւնը ստղում էր պապերի
աթոռի առաջ: Մահաբաւական չէր թողնի, որ իր
նոյն իսկ պղծ հպատակին էլ այրեն ի փառս
ամենաբարի Աստուծուն...:

IX

Փակեք աչքեր անցեալի տխուր, արիւնով ու
արտասուքով զրած էջերը և գանք, նայենք մեր
ժամանակին: Ահա այն երկիրը, ուր Լէնկիմու-
րը իր ահելի կոտորածներից մէկը կատարեց:

Բայց նրանք ամեն մէկին, որ շնորհ է ցոյց տալիս,
թէ մենք մի շատ տարօրինակ սովորութիւն
ունենք հալածելու, ոչնչացնելու հայոց զբաւա-
նութեան երեւելի զարդերը: Եւ որպէս զի փառ-
քի անարժան, բայց փառքի վրա խելը կորց-
րած այդ պարոնները ցոյց տան թէ իրանք են
լու հասկանում, իրանք են կարող գործիչներ
ստեղծել, սկսեցին միմեանց գողնալ գովել, իէկ-
լամներ անել միմեանց: Նստերից մի օրինակ:
Տարիներ առաջ Թիֆլիսում պատում էր մի ոմն
Գալֆայեան, որ ասում էր թէ ինքը Աղամեա-
նի տեղը պիտի բռնէ հայոց բեմի վրա և դեռ
պիտի նստեցնէ Աղամեանին էլ: Հաւատացին
մեր շովինիստները, և փոխանակ այստեղ փո-
ձելու այդ մարդու ողբերը, ուղարկեցին Պարիզ,
չը նայած որ նա տղէտ էր, ոչինչ չէր սովորել
և կարօտ էր ոչ թէ Պարիզին, այլ տարա-
կան կրթութեան: Այն ժամանակ հայոց բեմի
համեստ գործիչներից մէկը բողոք տուց «Մշա-
կում» և յայտնեց, որ պ. Գալֆայեան մի անըն-
դունակ ու անպաշտ դերասան է, որին չէ կա-
րող շտկել ոչ մի Պարիզ: Հայոց «առաջնորդե-
րից» մէկը, որ այն միամտութիւնն ունի թէ
ամեն ինչ աշխարհում ոտանաւոր գրելու մէջ է
պարփակված, մի մեծ վայնասուն բարձրացրեց
և ուղղակի «հաստատեց» որ «Մշակը» չէ ու-
ղում որ հայերի մէջ շնորքով մարդ լինի: Եւ
այնուհետ ինչ տեսակ բէկլամներ ասես, որ
երևան չեկան հայոց լրագրութեան և ամառա-
բերում: Պարիզից հեղեղի պէս թափվում էին
գովեստներ հայ «հանճար» մասին և Թիֆլիսը,
Կ. Պոլիսը, Վենետիկը, համարեա այն բոլոր
քաղաքները, ուր հայերէն տպարան կայ, ար-
ձաղանք տուին այդ ներքողներին: Իսկ հայ
հանճարը, որը որպէս թէ հիացրել էր Մուշե-
կիւնին իր «Համբարձում», պատրաստուած աղ-
չեցնել ամբողջ տիեզերքը, ներկայացնելով Պա-
րիզի մէջ «Օտքի» Եւ ահա պ. Փօլոյեան «Ա-
րեւելք» մէջ այսպէս է նկարագրում այդ սքան-
չելի ներկայացումը:

Վարպետը բացուցաւ Ու. մարդ մը տե-
սայ, երկաթ բարակ, ցանցաւ ձուրձով, նոր
բուսնող պիւրիկով, և որ՝ ջրանիւթի հա-
ղուտներով կը քայլէր կամաց կամաց: Օ-
թելուն էր: Ու դեռ չը խօսած, բերանը չը
բացած, աչքերը սոսկալի կերպով բացուե-
ցան, դոցուեցան, քիթը բերանը տակնուվրայ
եղան, դէմքին գիծերը իրար խառնուեցան:
Ինչ կըլլար. կարծեցի թէ «սառնա» ունէր
խեղճը: Այ. նախանձոտ Օթելիւն էր: Նստաւ,
ու խօսիլ սկսաւ. հայերէն պիտի խօսի՝ դը-

Դա Վանն է իր չրկակալով: Ժամանակը այդ-
տեղ ոչինչ չէ փոխել. որքան ողբալի անշար-
ժութիւն... Կարծես հինգ հարիւր տարիներ չեն
անցել Վասպուրականի վրայով. կարծես XIV
դարի սև հերոսներից մի քանիսը միայն երէկ
գերեզման մտան, իսկ մնացածները դեռ ոտքի
կան են, վազվզում են, իրարով անցնում: Լէնկ-
թիւններն կոտորած, ապա սով և շարունա-
կութիւնը—ընտանի, եղբայրասպան պառակ-
տութեան ամենաբարի Աստուծու համար... Նոյն
դոմինիկեան վարդապետները, նոյն ուսուցող-
թիւնը, նոյն վանական կեղծաւոր գոհունակու-
թիւնը, ուղղած դէպի հնձի առատութիւն չնոր-
հող կաթոլիկական նախախնամութիւնը: Չեք
առչկն է հին ուրուականը իր ամբողջ հաւա-
կով, ծեք, ամեն տեղից արտաքսված, գիտու-
թեան ընթակցական նետերով ամեն կողմից խցոտ-
ված, դարերի ծաղրի և անէծքի տակ կորացած,
ընդհանուր մոռացութեան, ընդհանուր արհա-
մարհանքի ժանգով պատած: Նա միայն այստեղ
այս խեղճ ու կրակ երկրում, աղիտութեան և
խաւարի այս թշուառ որջում կարող է իր ծեք
ատամներով գործ տեսնել: Եւ բոլոր դերակա-
տարները բեմի վրա են, իրանց սիրած տե-
ղերում:

Ըստ երևոյթին, պակասում է միայն հայ ունի-
թիւնը: Բայց այս դէպքում լոկ անուանելի մի
փոփոխութիւն է կատարվել. բացէ՛ք Միսթրաթան
վարդապետ Անտու Ջնդոյեանի նամակը *) և
դուք ապահով կարող էք լինել, որ ներշնչի
միաբանող եղբայրները հայ միսթրաթան մի ան-
*) «Մշակ», № 80.

*) Карфевъ, „Исторія Зап. Европы въ новое
время“, 4-е изд., т. 1, стр. 235.

առօժիկով, երկու ֆէլդշեր և մի մանկաբարձուհի՝ 400 ռուբլի իւրաքանչիւրին: Հիւանդանոցը կու- նենայ 4 մահճակալ գիշերօթիկ հիւանդների հա- մար: Պատրաստվում է քանակաւ հիւանդանո- ցի համար վրաց ընկերութեան դէպօրում, բա- ցումը տեղի կունենայ մայիսին, ա. Նունէի վան- քի մայրապետի նախաձեռնութեամբ, նոյնպէս վանքում չուտով կը բացվի հիւանդանոց կոյսե- րի համար:

Միջոցաւ Մալխասի պէս մի գիւղ հիմնում է իր համար հիւանդանոց, Սընախում դեռ ևս բացակայում է հիւանդանոց, որ ամենամահա- մեշտ է աղքատ դասակարգի համար: Մեր քա- ղաքային ինքնավարութեան անվիշակաւ պար- տաւորութիւնն է՝ խորհրդակցութեան առարկայ դարձնել հիւանդանոցի հարցը և միջոցներ ձեռ- առնել շուտով Սընախում քաղաքային հիւան- դանոց բանալու երթեկ հիւանդների համար. դա մի մեծ բարիք կը լինի, որ մեր դուռնի կը միտքոյանէ քաղաքի չքաւոր աղքատակու- թեան:

8. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Քիֆլիս, մայիսի 13-ին
«Մշակ» լրագրի 83 համարում կարդացի «Ան- հրաժեշտ Նստողութիւն» առաջնորդող յօդուա- ծը՝ ուտեղեցիների և ըմպելիքների խարդախե- լու մասին: Արդարև հարկաւոր է այդ երևոյթի վրա լուրջ ուշադրութիւն դարձնել: Սա ստէպ- ստէպ փողոցով անցողաբժ անելով, շատ ան- դամ ակնատես եմ եղել և լսել եմ խարդա- խութիւնների մասին Քիֆլիսում: Օրինակ, թարմ պանիրը եփեկած ջրում պահում են, որպէս զի նա դեղին երևայ, որովհետև դեղինը յարդի է, բայց այդ վնասակար չէ. մի և նոյն պանիրի վրա դնակ են քսում ցոյց տալու, որ նա իբր թէ այնքան պարարտ է, որ իւրը դուրս է տուել: Գեղաբերունի ձուկը, երբ թարմութիւնը դորցնում է, նրան օժում են սաղի, խողի կամ ուրիշ կենդանու արին քսելով, որպէս զի թարմ երևայ: Ընչիւթի (չիրբախտ) ձէթի մէջ արևա- ձուկի սերմի ձէթ են խառնում, որովհետև վեր- ջինը առաջինից է ծանր է. ալիւրի մէջը սմին- ղիւր ալիւր են խառնում է ծանրութեան համար, կաթի մէջ համարեա կէսը ջուր են խառնում, մանաւանդ ոչխարի կաթի մէջ, որ թանձր է և ջուր չափ է վերցնում: զինու վերաբերութեամբ, ինչպէս յայտնի է, շատ սակաւ է պատահում, որ առանց խարդախելու ծախվի: Նրա մէջ անպիսի բաներ են խառնում, որ ուղիղ վնա- սակար են:

Այս փորձի տեղեկութիւնը քաւական եմ համարում իրողութիւնը յայտնելու համար: Մնում է, որ ում անկ է, հոգայ խարդախու- թեան դէմ միջոցներ ձեռք առնելու:

Կ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են, որ կառավարչա- պետ իշխան Գոլցին մտադիր է Պետերբուրգից ուղևորվել դէպի Քիֆլիս ամսին 20-ին:

Երէկ, մայիսի 13-ին, Մոսկվայից, Խ. Յովհաննի- սեանից ստացանք Տետուսի հետագիրը: «Երկարա- տև հիւանդութիւնից յետոյ երէկ, մայիսի 12-ին, վախճանվեց մամուլի գործերի աւագ տեսուչը Մոսկվայում՝ Զարմայր Մսերեանցը: Հան- դուցեալը Մսեր մագիստրոսի որդին էր և յայտ- նի էր հայ գրականութեան մէջ իր աշխատասի- րութիւններով, որոնք տպված են դանդաղ թեր- թերում: Մի կարճ միջոց նա հրատարակեց պատկե- րադարձ «Փարոս Հայաստանի» հանդէսը, որ նը- շանակված էր ընտանեկան ընթերցանութեան հա- մար: Զարմայր Մսերեանց լոյս ընծայեց իր հօր մի քանի անտիկ աշխատութիւնները: Նա տը- պագրել է մի քանի յօդուածներ «Մշակի» մէջ: Հարաւային Ռուսաստանի հայերի և ուրիշ նիւ- թերի մասին: Մսերեանց թողել է ժառանգներ, որոնցից մէկը՝ մագիստրոս Լևոն Մսերեանց, նուրբել է իրան լեզուագիտութեան ուսումնա- սիրութեան:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ հանդու- ցեալ Արտեմ Իւղաշեան կտակով թողել էր իր ժառանգութիւնը Ներսիսեան դպրոցին և հինգ հարկաւոր ռուբլի Քիֆլիսի հայոց Հրատա- րակչական ընկերութեան և Բարեգործական ըն- կերութեան: Սակայն այդ ժառանգութիւնը չէ յանձնված Ներսիսեան դպրոցին այն պատճա- րով, որ խնամակալութիւնը մինչև այժմ չէ կա- ռողացել մաքրել հաշիւները, տալ պարտքերը և ստանալ ապուրիւնները: Ինչպէս լսում ենք, ցան- կադղեր կան գնել Արաւոյնումնում գտնվող ամառանոցը և Գանձակում գտնվող քարվանսա- րալի մասը: Եթէ վաճառքից դոյնայ պատկա- ւելի դուռնար, կարելի է հանգցնել պարտքի շնորհաւոր մասը և թեթևացնել ժառանգութիւն ընդունողներին գործը: Արդէն առաջարկողներ

կան առաջին կալուածքի համար 16,000 ռուբլի, իսկ երկրորդի համար 15,000 ռուբլի, բայց կա- լուածները աւելի արժեն և հաւանական է, որ աւելի թանկ գնով կը ծախվեն: Բայց այդ կա- լուածներին հանդուցեալ Իւղաշեան թողել է մի տուն Ֆրէյլինեան փողոցի վրա:

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, աչքի առնելով այն հանգամանքը, որ դպրոցական շատ առարկաների համար չը կան ձեռնարկներ և դա- սաղքներ, իր վերջին նիստում որոշել է օժան- դակել այն ուսուցիչներին, որոնք կը ներկայաց- նեն պատաստ ձեռնարկներ: Օժանդակութիւ- նը կը կայանայ նրանում, որ հոգաբարձութիւնը իր վրա կը վերցնէ տպագրութեան ամբողջ ծախսը, կամ այդ ծախսի մի մասը: Հոգաբար- ձութիւնը իր որոշման հիման վրա նշանակել է 150 ռուբլի օժանդակութիւն կրօնի դասադրի համար, որ արդէն պատրաստ ունի Ս. քահանայ Սահակեան:

Ինչպէս յայտնի է, Կարսի ջրվանից ու Ախալ- քալաքի դաւառից բազմաթիւ դուխորներ դաղ- թեցին Ամէրիկա, թողնելով իրանց անշարժ կա- րքերը: Այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, դուխորներին նրանց կալուածներին փոխա- րէն վարձատրութիւն տալու նպատակով, մտա- դրութիւն կայ մի յատուկ յանձնաժողով կազմել, որ գնահատէ այդ կալուածները:

Մեզ հաղորդում են, որ Գ. Իսնիկէլեզեան մա- յիսի 1-ին կարդաց Պետերբուրգի անտառային ընկերութեան մէջ մի զեկուցում: Բազուի նա- հանգի Ղուրայի գաւառի անտառապահութեան մասին: Զեկուցանողը հիմնվելով իր դիտողու- թիւնների վրա, արձանագրեց այն տխուր հան- դամանքը, որ անտառները անխնայ կերպով կտրատվում են: Բնիչեւ, ինչպէս յայտնի է, լեռ- ներում բուսող անտառները մեծ դեր են խա- դում ջուր ամբարներ և հեղեղների ոյժը թու- ցնելու գործում: Եթէ անտառները իսպառ- չեն անհետացել, դրա պատճառը հաղորդակցու- թեան բացակայութիւնն է: Սակայն նոր շինվող երկաթուղին շուտով այդ անյարձարութեան ա- ռաջն էլ կառնի: Անհրաժեշտ է, որ անտառա- յին վարչութիւնը գործէ ջրաբաշխութեան վար- չութեան հետ միասին ոյժով: Զեկուցանողը ա- ռաջարկում է վերաբնիկ անտառապահութեան վերաբերեալ օրէնքը և յարմարեցնել նրան տե- ղական պայմաններին: Ընկերութեան ժողովը որոշեց Իսնիկէլեզեանի զեկուցումը տպել ընկե- րութեան «ЖЕНОЙ ЖУРНАЛ» ամսագրում:

Ներկայումս Քիֆլիսի վաճառանոցում շատ թանկ է տաւարի միսը: Ամեն տարի դարնանը Քիֆլիս է գալիս Լենքորանի և Զաւադի գաւառ- ներից մեծ քանակութեամբ տաւար, որ յայտնի է Քալիչի աղանք անունով: Սակայն այնտեղի անտառներին վրա երեւեղած ժանտախտը պատ- ճառ եղաւ, որ տաւարի տեղափոխութիւնը ար- գելվեց: Քիֆլիսը այժմ մոռնում է, բայց տեղա- կան կովերից և եզներից, Հիւսիսային Կովկասից բերած անասուններ և մեծ քանակութեամբ գո- մէջներ:

Ռուսաց գրիդատնտեսական թերթից մէկը, «Вѣстникъ Русскаго Сельскаго Хозяйства», որ հը- րատարակվում էր Մոսկվայում, դադարեցրեց իր հրատարակութիւնը նիւթական միջոցների պա- կասութեան պատճառով: Երաթթաթերթը խըմ- բագրում էին յայտնի կաթնատնտես Ն. Վերեշ- չային և Ի. Պետրով: Նրա մէջ մեծ տեղ էին ընդունում կաթնատնտեսութեան և տաւարապա- հութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկու- թիւններ: Երաթթաթերթի խմբագրութիւնը, դադարեցնելով հրատարակութիւնը, առաջար- կում է իր բաժանորդներին «Сельскохозяйствен- ный Журнал» ամսագիրը, որ ահա չորրորդ տա- րին է, հրատարակվում է Մոսկվայում այնտեղի գրիդատնտեսական ընկերութեան հրատարակու- թեամբ:

Քիֆլիսի քաղաքային վարչութիւնը մայիսի 12-ին հաստատեց հրդեհից փոխադարձ ապահו- վող քաղաքային ընկերութեան այն վճիռը, ո- ռով որոշված էր պակասեցնել 25% նրանց հա- մար, որոնք ապահովացրած ունեն այդ ընկե- րութեան մէջ իրանց կալուածները 10 տարի շարունակ:

Բազուի և Գերբենի մէջ երկաթուղու կանո- նաւոր երթեկութիւնը կը սկսվի սեպտեմբերի 1-ից:

ԱՍԼԱՔԱՒԱՔԻՑ, մայիսի 10-ից, մեզ գրում են. «Տիֆլէ Զանգուրա գիւղում դեռ շարունակվում

է Տաւարի ժանտախտը Սուղդայում սաստկացել է: Այդ գիւղի և չրջակայ գիւղերի յարաբերու- թիւնները խզված լինելու շնորհիւ՝ միւս գիւղե- րը, բարեբաղդաբար, դեռ ազատ են այդ հի- վանդութիւնից:

ՂՂԶԸԼ-ԱՐՎԱԳԻՑ մեզ գրում են. «Պ. Անդ- րանիկ և ա. Անիւ դերասանները ամսին 2-ին, տեղին սիրողների մասնակցութեամբ, ներկա- յացրին «200,000», «Միւրիկ» և «Միւրիկ» հար- սանիւր» վոլըվիւնները: Նրիտասարդ դերասանի և դերասանուհու ընտանիքը ուղղութիւնը շատ հա- մակրելի է, որ իրանց բաղդը փորձում են գա- ռաւական քաղաքներում: Լսում ենք, որ սի- րողների առաջարկութեամբ պատրաստվում են երկրորդ ներկայացում ևս տալու: Կատարեալ աջողութիւն ենք ցանկանում, իսկ ՂՂԶԸԼ-Ար- վադի վաճառականներից արթնութիւն, որ ան- տարբեր չը վերաբերվեն դէպի հայերէն ներ- կայացումները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ ԹԻՒՐԻՒՄԻՑ

«Արեւելի» մէջ կարդում ենք. «Երէկի թուով ծանուցինք թէ Վանայ Առաջնորդարանին զը- րուած է Պատրիարքարան, թէ Աւերակ գիւղի 160 տուն դաւանափոխ Հայերը մայրենի Նկե- ղեցւոյ գիւղը դարձնել են: Մեր առած մասնաւոր լուրերուն նայելով, ուրիշ գիւղերու դաւանափոխ ազգայիններն ալ դարձած են հետզհետէ. կը մնան միայն Արշակ և Գուրուպաշ գիւղերը և տարբ տուն ալ Կոյր-Գար թաղին մէջ:

«Գարձեալ Վանէն կը գրեն մեզ, թէ Յայնկոյս- ներու եկեղեցւոյն վերաշինութեան համար 600 ռուպլի գրկած է Ս. Հայրապետը, խոստանալով շարունակել ալ նպաստը: Տեղացիները՝ կառա- վարական արտօնութեամբ՝ ձեռնարկեց են վե- րաշինութեան գործին: Մտադրութիւն կայ յի- չեալ եկեղեցւոյն ընդարձակ չըլսափակին մէջ հիւանդանոց մը շինել՝ բարեխառնակ Սրուան- տեանց եպիսկոպոսի կտակին տրամադրութեան համաձայն. այս նպատակով, Վանայ աղբային- ները դիմած պիտի ընեն Ազ. Կեդր. Վարչու- թեան՝ խնդրելու համար որ Սրուանտեանց կտակին գումարը յատկանայ այդ հիւանդանոցին պէտքերուն, որուն շէնքը իրենց իրենց ծախելով կառուցանել յանձն կառնեն: Իսկ եթէ կարելի չլլայ կտակին մայր գումարը ձեռք ձգել, Վանեցիները պիտի խնդրեն որ դէ՞մ ամբ բար- դուած տոկոսները յատկացուին՝ կառուցանելի հիւանդանոցին բժշկական ծախքերուն և դեղերու մատակարարութեան:

«Արեւել» լրագրին գրում են Նրուսաղէմից, ապրիլի 15-ից. «Այսօր Հռոմի ուսումական դես- պան Պ. Թը Նէլիոֆ փոխադարձ այցելութեան եկաւ մեր Ս. Պատրիարք Հօր՝ որ երէկ բարի գալուստ շնորհաւորելու դացած էր Ն. Վսեմու- թեան՝ իր հետ ունենալով, իրեն թարգման, եպիսկոպոս մը և Վանքին թարգման վարդա- պետ:

«Շատ սիրալիր էին այս կրկին տեսակցութիւն- ները, մանաւանդ որ Ն. Վսեմութիւնը վաղա- ծանօթ էր Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատ- րիարք Հօր:

«Ծերացալ, ըսաւ, դեսպանը, և ձերութեան ժամանակ փափաքեցաւ ուխտի գալ Նրուսաղէմ, ձերութեան սրբութիւնը անվթար պահպա- նելու համար:» Այդ, պատասխանեց Ս. Պա- տրիարքը, մարդկային դէմքերը իրենց կենդա- նազրկը պատկերներու մէջ այն առնել անալալ կը պահեն, երբ կը ձերանան ու մօրենքին կը սպիտակնայ: Ե. երկուքն ալ սկսեցին խնդալ:

«Ն. Վսեմութիւնը երիցս ձեռքը համբուրեց Ն. Սրբազնութեան, այցելեց ս. Յակոբայ տա- ճարը, երկրպագեց ս. Գլխազրի մատրան մէջ, սքանչալաւ ճամբին շքեղութեան վրա՝ որ ինչպէս յայտնի է Զատիկական տօններուն առ- թիւ պայծառագոյն է իր փառաշուք դարձրելով, բացատրութիւններ խնդրեց տաճարին, սեղան- ներուն և եկեղեցական արարողութեանց վրա՝ որոնց պատասխանեց թարգմանի պաշտօն կա- տարող եպիսկոպոսը: Լուսարարապետ սքա- ղանը, ըստ փափաքանաց Պ. Թը Նէլիոֆի, մէկ քանի հնութիւններ ցոյց տուաւ, որ հիա- ցում պատճառեցին: Դեսպանը չը կրցաւ զըս- պել իր սքանչալուք մանաւանդ, երբ տեսաւ ձեռագիր աւետարան մը՝ իր պատմական յի- շատակներով ու պատկերներով փառաւոր ու շքեղ, և, երկիցս համբուրեց զայն ըսելով. «Ո՞վ կը պահպանէ այս դարաւոր սրբազան անօթ- ներն ու յիշատակները այսքան անաղարտ, մա- լուր ու անբժժ. ցոյց տրուեցաւ լուսարարա- պետ սրբազանը իբրեւ միակ պատասխանատու եկեղեցւոյ ըլլող գոյնց ու սրբազան անօթնե-

րուն:» «Կեցցէ՛ք ըսաւ դեսպանը ու երկիցս իր գոհունակութիւնը յայտնեց, բաժնուելով խոր տպաւորութեան մը ներքեւ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԻՑ

Տրապիզոն, մայիսի 1-ին

Տրապիզոնն ոչ շատ հեռու դէպի Կ. Պօլիս՝ կայ ծովափնեայ Օրդու քաղաքը իր ընդարձակ դաւառով: Օրդուն եթէ յայտնի չէ իր բազմա- թիւ հայ գիւղերով, բազմաշարքար և անհող երկ- րագործներով, որոնք զաղթած ու ցրված են Սև ծովի ուսումական ափերը, գէթ հոշակաւոր է բը- րինձի ճահճներով, վաշխառուններով և տէր- Սքրահամ, Յ. Էյօմէզեան, Չորպաճեան և այլն և Պիւլպիւլեան սողուններով: Այս վերջինը՝ Գէորդ էֆ. Պիւլպիւլեան՝ օժտուած լինելով կեղծաւո- րութեան, ստախոսութեան և լեզուաբարոյթեան հարուստ ձիրքերով, Օրդուի գաւառը շատ նեղ գտաւ իր գործունէութեան և վաղուց տեղա- փոխվեցաւ Պօլիս. շուտով փաստաբանի հոշակ վայելեց, և ամուսնացաւ Հինքարալէյնտեան գիտնական քահանայի աղջկայ հետ:

Բայց Տաւանի դափնիները հանգիստ չը տը- լին Պիւլպիւլեան էֆէնդին: Սրբին փաշա ձե- րացրեց է. անոր գառնազգեստ գալլի դերը կատա- րող մը միշտ պէտք պիտի լինի Բ. Գրան. ին- չն. չը գրաւել զայն, ինչպէս թողուլ, որ Տաւեա- նի յաջորդէ մի Գէլէկեան և ոչ Պիւլպիւլեան: Գնորհիւ իր արհեստին և ճարտիւրութեան, շատ շուտով յաջողութիւն գտաւ իր նոր տնտեսած առ- պարէզի մէջ և արդէն անցեալ տարի կարևոր յանձնարարութեամբ մեկնեցաւ Ներսիս: Ներ- սիսական մամուլն իսկ արձանագրեց Պիւլպիւլեա- նի հանդիսաւոր դարուստը, բայց ապերախտ հայերը չը կրցան հասկնալ այդ մեծ ազգասէրը և Պարիզի մէջ հիւրասիրեցին ինքը մի փառա- ւոր ձեռով: Պիւլպիւլեան սկսաւ ստու ու սխալ տեղեկագրեր տեղալ Պօլիս և առատ փող կոր- ղել թրքական անյատակ գանձարանէն. իր պըն- դելով և ստիպմամբ հաստատվեցաւ Ժընէվի թիւրք հիւպատոսութիւնը, նպատակ ունենալով իր անձնաւորութիւնը տեղաւորել հիւպատոսա- կան աթոռի վրա: Ամբողջ տարի մը փառաւո- րապէս ճամբորդելով եւրօպական կենտրոնները, անցեալները վերադարձաւ Պօլիս և արդէն 4 անգամ կայսերական պալատ գնալով՝ իր խմած ընտիր ջօնակներու և շամպայններու հաշիւ- տուութիւնը ըրած է՝ համեմելով դիպլոմատիա- կան տեսութիւններով: Իր փաստաբանական գրասենեակը շատոնց դոցած է, սակայն դժուար չէ զինքը գտնել. բաւական է Բերայի միւլթէ- սարիֆ Էնվիլի պէյի մօտ գնալ. նա ամեն օր այնտեղ է. կաշխատի այժմ եւրօպական մի կա- րևոր քաղաքի՝ Ժընէվի կամ Պարիզի հիւպատո- սութիւնը ձեռք բերել և թրքական ոսկիներով յեղաշրջել օսմանեան աշխարհի քաղաքականու- թիւնը: Նրեի Պիւլպիւլեան էֆէնդի իր կնոջ ա- կանջին շատ է փոփաքեցր այդ ոսկիներու մա- սին, որ տիկ. Վերնիքա իր ամուսնու բացա- կայութեան, անխտենաբար ահագին ծախսեր կընէ և պարտքի մեծ կոյտ մը թողնելով Պօլիս, կը փախչի Պարիզ. խեղճ կինը սրտատրոփ կը սպասէ իր սիրելի Գէորդ էֆէնդիի բերելը ոս- կէ կոյտին... որ սակայն դեռ կուշանայ:

Այս է Պօլիս ընտկող Օրդուի մի բարեկամիս տուած տեղեկութիւնները, որը հիացած է իր հայրենակցի ընդունակութիւններով և կը դուշա- կէ մեծ ապագայ այդ հանճարեղ մարդկին... Աստուած տայ և խնդացնէ:

Տեղացի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական առևտրական պալատը Կ. Պօլ- տու հրատարակեց իր տարեկան հաշիւը արտա- սանմանեան առևտրի դրութեան մասին թիւը- րեալում: Այդ առիթով «Köln. Zeitung» լրագրի Կ. Պօլի թղթակիցը մատնացոյց է անում թիւը- րաց մաքսատների պակասութիւնների վրա, որոնց վրա մինչև այժմ շատ փոքր ուշադրու- թիւն էր դարձնում: Վաճառականները չեն կարողանում վստահութեամբ վերաբերվել թոյ- լատված ապրանքների պաշտօնական ցուցա- կին: Բոլորովին անպատեղի կերպով մաքսատնե- րում բռնվում են ամենամանր ապրանքներ, երբեմն միայն այն պատճառով, որ առևտրա- կան մարկան այս կամ այն պաշտօնեային քա- ղաքականապէս կասկածելի է երևում: Բռնվում են երբեմն լուցկիներ, որովհետև տուփերի վրա նկարված է առիւծ կամ դաշնի, որը, ուստի կանոնական կարծիքով, հայկական մեքենայու- թիւններն է ցոյց տալու: Բռնում են թիւեր, որովհետև կծկիները վրա նկարված է թագ: Պատկերներ Մարի Ստիւարտի վերջին օրպէ- ների կամ Համլետի տեսարանների նկարագրու- թեամբ, գրքեր որոնց մէջ պատահում են Հա- յաստանի անունը, բոլորը կասկածելի է թուում:

Եւ մեզքն ընկնում է ոչ թէ պաշտօնեաների, այլ լրտեսների վրա, որոնք չըջապատում են նրանց և որոնց մատուցելու նրանք վախենում են: Գործի այդ կողմի վրա թղթակցը ցանկանում է հարկերը օտար պետությունների ներկայացուցիչներին ուղարկել: Բայց արա՛ւստրական երկրների շահերը ի նկատի ունենալով:

—Անգլո-հնդկական մամուլը մեծ յուզմունքով վերաբերվեց գերմանական «ATCONA» նաւի Պարսից ծովը դառնալ «Polit. Corr.» լրագրի Ադէնի թղթակցից այդ յուզմունքը հիմնաւոր է համարում և նկատում է, որ այդ շրջաններում գերմանական մրցումը արդէն սպասելի էր այն վայրկեանից, երբ Գերմանիան սկսեց իր ազդեցութիւնը հաստատել Հնդու Արեւելքում, չը խօսելով այն բանի մասին, որ Գերմանիայի ֆիլիստինական շահերը Փոքր-Ասիայում պէտք է մղեն նրան նոյնպէս այդ կողմերը: Ներկայումս ղրական գիծը Միջերկրական ծովի և Պարսից ծովի մէջ գերմանացի ձեռնարկողների ցանկալի մասնաւորապէս է կազմում: Յաղթող, թղթակցի կարծիքով, կը մնայ այն կողմը, ով կը կարողանայ աւելի լաւ վարվել թիւրքերի հետ: Գերմանիան իր արեւելեան քաղաքականութեան մէջ մեծ հաստատականութիւն և զարմանալի հետեւողականութիւն է ցոյց տալով: Այդպիսի միջոցներով, և մի փոքր էլ համբերութեամբ, թիւրքիւնքում ամեն նպատակներին կարելի է հասնել: Բացի դրանից, գերմանական առևտուրը այստեղ կը սկսի մրցել անգլիական առևտրի հետ: Արդէն խօսում են, թէ մտադրութիւն կայ շրջանաւային ուղղակի յարաբերութիւն հաստատել Համբուրգի և Բուլբրի միջև: Մինչև այժմ եւրոպական նաւահանգիստները և Պարսից ծովի մէջ հաղորդակցութիւնը պահպանում էին միայն անգլիական շահերով: Հնարաւոր է, որ շուտով Բուլբրի վրայով դէպի Պարսկաստան կը սկսեն գերմանական ապրանքներ դառնալ: Նրանք այն ժամանակ կը սկսեն մրցել Մոսկվայի արդիւնաբերութեան հետ Խորասանում և Պարսկաստանի հիւսիս-արևմտեան մասում: Իդուր չէր, որ Գերմանիան հիւպատոսութիւն հաստատեց Բուլբրում և պատրաստվում է հիմնել փոխ-հիւպատոսութիւն Բէնդէր-Աբասում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յրանսիան շուտով կը տօնի իր հռչակաւոր դրող-վրպասան Բալզակի ծննդեան հարիւրամեայ յօրեկանը: Առաջիկայ յօրեկանի առիթով մամուլի մէջ երևացին նոր զօլումներ, որոնք վերաբերվում են այդ վրպասանի կեանքին: Ի միջի այլոց «Temps» լրագրի մէջ տպւում է այժմ Բալզակի նամակների մի ամբողջ շարք: Առաջ էլ արդէն յայտնի էր, որ Բալզակ, իր ամբողջ կեանքի ընթացքում, ստիպված էր միշտ կտրուկ մղել նրկական ծանր հոգսերի դէմ: «Temps» լրագրում տպւում նամակներից երեւում է, որ նա երբեմն կատարելապէս քաղցած էր մնում: Օրինակ, նա գրում է 1839 թիւ նոյեմբերի 2-ից. «Ես սարսափելի տանջանքներ կրեցի. ես մինչև անգամ չեմ կարող նկարագրել ձեզ այդ: Նրկու անգամ ես այն տեղը հասայ, որ ես հաց, վառելիք և թուղթ չունէի: Մէկ ուրիշ նամակի մէջ 1840 թիւ փետրվարից հանդիպում էր հետեւեալ նպատակաւորութեանը. «Ուրեմն, դուք ինքներդ չէիք կամենում զրել, որովհետեւ իմ նամակները ուշ ուշ էին հասնում: Այսօր նրանք ուշ էին հասնում այն պատճառով, որ ես ամեն ժամանակ փող չէի ունենում մարկա գնելու համար և ես չէի կամենում ձեզ այդ առիթը: Այն թէ ուր է հասել իմ կարիքը: Դա սարսափելի է և շատ տխուր, բայց դա շատ ձեռք է: Այո, օրեր էին լինում, երբ ես հպարտանում էի, եթէ կարողանում էի բուլվարների վրա մի քանի սուի ապրանքի հաց գնել: Ինչպէս յայտնի է, հռչակաւոր վրպասանը ծանրաբեռնված էր թէ իր և թէ իր մօր պարտքերով, որոնց նա վճարում էր իր կեանքի ամբողջ ընթացքում և որոնք կրանում էին նրա բաղձմանը: Գրականքից ստացվող խոշոր եկամուտը: Նրա աշխատանքներից և անխնայութիւնը զարմանալի էր:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԵ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 մայիսի

ՄՇԱԿԱ: Այսօր, առաւօտեան ժամի 5-ին, Կուրսկի ճանապարհի վրա, Նէյտով և Նաւնիկի կայարանների մէջտեղ, տեղի ունեցաւ № 109 ապրանքատար գնացքի խորտակումը: Փշրվեցին 11 վագոն: Մեքենայապետը ու աւագ կոնդուկտորը վերաւորված են:

ՎԻԵՆՆԱ: Այսօր, կէսօրին, ճանապարհ ընկաւ դէպի Վարշավա ռուսաց օֆիցերների պատգամաւորութիւնը, որը ներկայ էր էրցհերցօգ Ալբրէխտի արձանի բացման:

ՆԻՒԵՐՈՎ: Մանիլայից հեռագրում են «Herald»-ին, որ ֆիլիպինները չեն ընդունել ամերիկացիների կողմից արած առաջարկութիւններից ոչ մէկը և կը վերադառնան Ազիւնայից: Ժամ:

13 մայիսի

ՕՐԷՍԱ: Խէրսոնի նահանգում վատ հունձ է սպասվում: Օղէնայի և Օչովոյի մօտ, նոյնպէս ծովափի ամբողջ շրջանում թէ հացահատիկները և թէ խոտը փչացաւ, այնպէս որ ցանքներում արածացնում են անասուններին: Համեմատաբար լաւ է Խէրսոնի նահանգի հիւսիսային մասը, որտեղ եկան անձրևներ: Ներառել է հացահատիկների վրա մի առանձին բզէզ, որը մեծ վնաս է հասցնում թէ արտերին և թէ այգիներին:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ: Այստեղ ժանտախտով հիւանդանոցում երկու դէպք տեղի ունեցաւ: Հնդանը այդպիսի դէպքեր երէկ և այսօր 4 էին: ՊԱՐԻՋ: Այսօր, առաւօտեան, Գալլէ-Բօպէ յանձնեց Մադոնի իր զեկուցումը Կրէյֆուսի դատի վերաքննութեան մասին:

ՊԱՐԻՋ: Պատգամաւորների ժողով: Միլիոն զեկուցում է ներկայացնում Կրէյնօլում նորերը տեղի ունեցած անկարգութիւնների մասին: Կրէյնօլի պատասխանում է, որ մի քանի մարդիկ կաշնաւորված են: Նրանք ուղղիչ դատարանի դատին կենթարկվին: Միևնուրեք պահանջում է, որ այդ գործին վերաբերեալ վիճաբանութիւնները յետաձգվեն: Պատգամաւորների ժողովը իր համաձայնութիւնն է տալիս 374 ձայնով 65-ի դէմ: Ապա վերոկազմեցին վիճաբանութիւններ Ալմիրին վերաբերեալ հարցերի առիթով: Սօցիալիստ Բուանէ եւեւնդով յարձակվում է հակառակմունքների վրա: Ալմիրի պատգամաւոր Մորիսո նրան ստոր է անուանում: Մարտիկի աղմուկ է բարձրանում: Նիստը վերսկսվելուց յետոյ, ժողովարար Պապիլիօ ժուրնալիստների տրեւումից, դիմելով Բուանէին, աղաղակում է. «Այո, դուք ստոր էք: Աղմուկը նորից սկսվում է: Նախապէս հրամայում է հեռացնել հասարակութիւնը արիւնքներից: Պապիլիօ-Բուանէ շարունակում է իր ճառը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԵԳՐԱՆԵԱՆ ԻՍԱԶԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձ դ ու շ ա յ է ք կ ե ղ ժ ու մ ն եր ի ց ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԼԵԱՆ ՍԱՊՈՆ Գ. Ֆ. Ի Ի Ր Գ Ե Ն Ս

Ողջացնում է պեպիւնները, սևութները, դեղին բծերը, պոպիւնները և պոպիւնները և ներգործում է աւելորդ բրանկու դէմ: Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս սուսակային անուշահոտ սապոն, բարձր արժանատիութեան:

ՈՍԿԵ ՄԵՒԱԼ 1893 թիւ համար: Կտորի զինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.:

Մախում է բոլոր ամենալաւ դեղագործական մագաղաններում և դեղատններում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Խորհուրդի մօտ Մոսկվայում: Իէպօ, Թիֆլիսում, Ալմաթիովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան բնկերութեան մէջ, Մուրմանովի և Կրիվնակի, պ.պ. Պոսոլոնի և Արխանգելովի մօտ: (13, 27) 5—24

ԲԺԻԶԿ ՄԻՆԵՍ ՄՈՒՐԱԳԵՆ

(Մ Օ Ս Կ Վ Մ Յ Ի ց)

Նախընթաց տարիների պէս կրնգունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում: Պատրիզօրսկում, մայիսի 8-ից: (հ. չ.) 3—10

Ամենաբարձր օժանդակը ներկայումս է Մ. ԲԱԼԼԵ ՆԻ ԲՆԿ. ՕՏԱՆԵԼԻՔ ԳՆՐԱՆԵ ՀՈՎԵՐ ՀՈՏԱՆԵՑ ԶՐԵՐ, ՍԱՊՈՆ ՄՈՍԿՎԱ 1) Պասեյն Տոլմոնովա. 2) Կրեյնօլ, Դ. Տիրմանովա. Շ.ՍԵՏԵՐԲՈՐԴՆ. Նոսկի 18. Նաև Ռուսաստանի յայտնի դեղատններում:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Երանում է ի գիտութիւն ընդհանուր, որ մայիսի 24-ին, ցերեկվայ ժամի 1-ին, վարչութեան մէջ նշանակված է վերջնական աճուրդ կապալով տալու՝ քաղաքապետական վերանորոգված երկ-յարկանի քարվանսարան (նախկին Շիօնի), որ գտնվում է քաղաքից 12 սենեակից, իր բոլոր յարմարութիւններով—վերի յարկում և երկու ներքնայարկից: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանները տեսնել ամեն օր առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը ցերեկվայ: 1—3

Հարկաւոր է մի հայ օրիորդ,

որը պէտք է աւարտած լինի ուսումը գիմնազիայում և գիտնայ լաւ. հայերէն լեզու, արտասանման, Մարսէլ, քնար համար երկու տարի ժամանակով: Պայմանների մասին դիմել ԱԾԱԵՆ-ԱԾԱԵՆԱ ՍԽԱՆԻ, տ. Հէջուրեանցի, ինքնէնք Զէջուրեանցին: (տ. ե. չ. չ. ե.) 1—6

ՇԵՆԵՐԵՐԱՆ-ՏԵՆԵՐԱՆ ԲԻՐՈ Իմեներ՝ Ն. Բ. Պասսեկի Կապալ, Միխայիլովսկայա թ. № 116. Հասցէն հեռագրի միջոցով: Կապալ—Պասեկ. ՏԵԼԵՖՈՆ № 642. ԿԱՆԱԼԻԶԱՅԻՄ, ՎԵՆԵՐԻԿԱՅԻՄ և ՏԱՔԱՅԻՄՈՒՄ ԳՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐԳԵԼ ա մ ի ն տ ե ս ա կ տիւրքերի, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ: Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ երկաթէ կամ մուրջնեւ և տաններ: ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ 1—100

Ս. ԲԱԼԼԵ եւ ԸՆԿ. ՀԱՅՐԱՅՐՈՂ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ ՕՏԱՆԵԼԻՔ ԼԵՎԿՈՅ Veillet blanc Մոսկա, Կրեյնօլ մօտ. Կապալ, Միխայիլովսկայա թ. № 116. ՏԵԼԵՖՈՆ № 642. (չ.)

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЪЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСКАЯ ЧАСТЕЙ ЖЖЕНЫЙ КОФЕ С.С.И.У.И.К. ПРОДАЖА ВЕЗДѢ 5—26

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Երանում է ի գիտութիւն ամենի, որ ներկայումս կոմս Լօլիս-Մեկլեովի անունով թողանքից մէկը ազատ է: Կանոնադրութեան համաձայն այդ թողանքով կարող են օգտվել համալսարանների միայն այն ուսանողները, որոնք լաւ աւարտել են իրանց ուսումը Թիֆլիսի գիմնազիաներից մէկում և մի և նոյն ժամանակ բուն Թիֆլիսից են: Ծանկացողները պէտք է իրանց խնդիրները, հարկաւոր դիմումները հետ, ներկայացնեն մինչև 1899 թիւ օգոստոսի 1-ը: (ա. 14) 3—3

Ուրբաթ, մայիսի 14-ին

Ալեքսանդրեան ազում, Թիֆլիսի մանուկներին խնամող ընկերութեան օգուին լինելու է

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Տ Օ Ն

Խաղալիքների վաճառումով: Այդում լինելու են երկու խումբ մուղիկա, զօռնա, երգեցիկ խումբ ու ժանկական խաղեր:

Երեկոյեան լուսավառութիւն ու 8 ժամին հրախաղ: Սկիզբն է ժամի 3-ին հաջից յետոյ: Մուտքն է 20 կոպէկ, երեխաները վճարում են 10 կոպէկ: Նիւթ վատ եղանակ լինի, 80ՆԸ կը յետաձգվի մինչև նոր կարգադրութիւն: 4—4

Գիտատնտեսական գործիքներ եւ մեքենաներ Լ. ԽԱՆ-ԱԶԵՆԻ 250 նկարով: Կին է 50 կոպ. Կիմլ Կապալ, Обществу Издація Армянскихъ Книгъ. (հ. ո.) 34—50